

Շնորհակալագիր

Դուստրս՝ Մերի Չերնիկովա Մամիկոնի, ծնված 12.10.2011թ.-ին այս տարվա մարտի 20-ին աջ ձեռքի երրորդ մատի լուրջ վնասվածք է ստացել: Երեխայի մատը մնացել է երկաթյա դռան արանքում, որի հետևանքով եղունգի կեսը անդամահատվել է: Երեխային տեղափոխել ենք Եղվարդի Նաիրի հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունք, որտեղից վիրաբույժի խորհրդով տեղափոխել ենք Երևանի Արաբկիր մանկական բժշկական կենտրոն: Արաբկիր հիվանդանոցից մեզ ուղարկեցին Մուրացանի հիվանդանոց, որտեղ վիրաբուժական զննությունից հետո միկրովիրաբուժական վիրահատության նպատակով առաջարկեցին երեխային տեղափոխել կամ Հերացու թիվ 1 կլինիկական հիվանդանոց, կամ Մուրք Աստվածամայր բժշկական կենտրոն: Մենք դիմեցինք Հերացու թիվ 1 հիվանդանոցի միկրովիրաբուժական բաժանմունք: Միկրովիրաբույժ Թեհմինե Հմայակի Ասատրյանի և հերթապահ բուժանձնակազմի ցուցաբերած պրոֆեսիոնալիզմի և հոգատարության շնորհիվ երեխայի մատի վնասված հատվածը վերականգնվեց: Թեհմինե Ասատրյանը և բուժանձնակազմը կատարեցին հնարավոր, և կարելի է ասել, անհնար ամեն ինչ՝ մեզ օգնելու համար: Վերքի մշակման և հետվիրահատական խնամքի համար մեզ առաջարկեցին դիմել տեղամասային պոլիկլինիկա, սակայն մեր խնդրանքը չմերժելով, բժշկուհի Թեհմինե Ասատրյանը անշահախնդրորեն համաձայնեց ստանձնել հետագա բուժումը: Մենք Մերի Չերնիկովայի ծնողներս ուզում ենք մեր խորհին շնորհակալությունը հայտնել և բուժանձնակազմին և մասնավորապես մեր գործին նվիրված բժկուհուն:

Կնգա Գերնիկովա 30.04.2019թ. Կերուհյժա.

